ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 112

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 47 որոշումը և հիմք ընդունելով Կարեն Ադամյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սոլակ համայնքի բյուջեի «Բնակչության օգնություն տալու մասին» 4729 հոդվածից Կարեն Ադամյանին հատկացնել դրամական օգնություն 25 000 /քսանհինգ հազար/ դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2020 թ. 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 113

ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 7 ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐ 3,63 ՔՄ, ՋՐԱՎԱԶԱՆ 8,15 ՔՄ, ՀԵՆԱՊԱՏԵՐ 5,35 ՔՄ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի, <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի պահանջներով , հիմք ընդունելով իրենց սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի այգեգործական զանգվածի 16-րդ թաղամաս 4 հասցեի հողամասում 1998 թվականին 7 ինքնակամ բացված պատուհան, ինքնակամ կառուցված աստիճանավանդակներ 3,63 քմ, ինքնակամ կառուցված ջրավազան 8,15 քմ և ինքնակամ կառուցված հենապատեր 5,35 քմ օրինականացնելու մասին Հայկ Սահակյանի դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, <<ՊԻՌԱՄԻԴԱ>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի, ինքնակամ կառույցի պահպանումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայկ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 07-060-0201-0002 ծածկագրում գտնվող այգեգործական զանգվածի 16-րդ թաղամաս 4 հասցեի հողամասում 1998 թվականին 7 ինքնակամ բացված պատուհանները, ինքնակամ կառուցված աստիճանավանդակներ 3,63 քմ, ինքնակամ կառուցված ջրավազան 8,15 քմ և ինքնակամ կառուցված հենապատեր 5,35 քմ համարել օրինական:

2. Կոտայքի մարզի Սոլակ համայնքի սեփականություն հանդիսացող 07-060-201-0002 ծածկագրի 0.01165 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրի այլ հողատեսքից փոփոխել բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին և բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Սոլակ համայնք այգեգործական զանգված 16-րդ թաղամաս 4:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գրանցման միավորված ստորաբաժանումում:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թ. 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 114

ՍԱՄՎԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 34-րդ հոդվածի 2-րդ մասի և Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն ՀՈԱԿ-ի տնօրեն Սամվել Ստեփանյանի նկատմամբ կիրառել <<միանվագ դրամական պարգևատրում>> խրախուսանքը, աշխատավարձի 60%-ի չափով՝ 78 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020 թ. 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 113

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 34-րդ հոդվածի 2-րդ մասի և Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար ներքոհիշյալ աշխատակիցների նկատմամբ կիրառել <<միանվագ դրամական պարգևատրում>> խրախուսանքը:

1)Համայնքի ղեկավար Էդգար Խաչատրյան	272 000 դրամ, աշխատավարձի 80%-ի չափով
2) Համայնքի ղեկավարի տեղակալ Մանուկ Դանիելյան	39 600 դրամ, աշխատավարձի 20%-ի չափով
3) Աշխատակազմի քարտուղար	135 600 դրամ, աշխատավարձի 80%-ի չափով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2020 թ. 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ